ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

2015 թ. ապրիլի 7-ի առավոտյան ժամը 06:30-ից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ քննչական կոմիտեն իրականացնում են այսպես կոչված «Գերևարում» (“Capture”, «Захват») օպերացիան, որի շրջանակում կատարվում են խուզարկություններ Հիմնադիր Խորհրդարանի անդամների տներում, նրանց բերման ենթարկումներ և ձերբակալություններ:
Խուզարկությունների, բերման ենթարկումների և ձերբակալությունների ժամանակ չեն ապահովվել Հիմնադիր Խորհրդարանի անդամների տարրական իրավունքները, մասնավորապես փաստաբան ունենալու իրավունքը: Խուզարկությունները և բերման ենթարկումները ուղեկցվել են ուժի ակնհայտ ցուցադրմամբ: Մասնավորապես Հիմնադիր Խորհրդարանի Վանաձորյան գրասենյակի ներկայացուցիչ Հովի. Ղազարյանի բնակարանի խուզարկումը իրականացնելու նպատակով ներկայացել էին 15-20 ոստիկանության աշխատակիցներ:
Ներկայումս շարունակվում են «անհետաձգելի քննչական գործողությունները և օպերատիվ հետախուզական միջոցառումները»:
ՀՀ քննչական կոմիտեի կողմից տարածված հայտարարության մեջ նշվում է, որ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 35-225 հոդվածի հատկանիշներով: Մինչ այժմ իբրև թե “զանգվածային անկարգությունների նախապատրաստման և իրականացման համար” որպես նախատեսված միջոցներ և գործիքներ առգրավվել են համակարգիչներ, հեռախոսներ, էլեկտրոնային կրիչներ, Հիմնադիր Խորհրդարանի գործունեությանը վերաբերող փաստաթղթեր:
ՀՀ ԱԱԾ և ՀՀ քննչական կոմիտեի կողմից ձեռնարկված միջոցառումները գնահատում ենք ապօրինություններ՝ ուղղված ՀՀ քաղաքացիների դեմ, որը նպատակ ունի ճնշել և սահմանափակել նրանց կարծիքի ազատ արտահայտման և խաղաղ հավաքներ անկացնելու սահմանադրական իրավունքը: Առևերույթ նման ակնհայտ ապօրինի գործողության հրահանգ կարող է տրվել միայն անձամբ Սերժ Սարգսյանի կողմից:
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ՀՀ ԱԱԾ և ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացված գործողությունները գնահատում է հակասահմանադրական, անբարոյական և համարում է քաղաքական հետապնդում, որի ողջ պատասխանատվությունը կրելու է ՀՀ քաղաքական իշխանությունը:
Վանաձոր, 07 ապրիլի, 2015թ.

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am